ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«29» հունիսի 2007թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Շ. Ավագյանի, որը գործում է ՀՀ ԱԳՆ կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ հաշվի առնելով «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հավելվածը, ինչպես նաև այն, որ Կապալառուն «Պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալի մասին» ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքած 2000թ. օգոստոսի 11-ի պայմանագրի համաձայն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հրատարակումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրի առարկա է հանդիսանում սույն պայմանագրի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխան Կապալառուի կողմից Պատվիրատուի հանձնարարությամբ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր» պարբերականի (այսուհետ՝ Տեղեկագիր) հրատարակումը և դրա հետ կապված կողմերի հարաբերությունների կարգավորումը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կապալառուն պարտավոր է՝

2.1.1. Պատվիրատուի հանձնարարությամբ հրատարակել Տեղեկագիրը՝ 300 օրինակ տպաքանակով:

2.1.2. Աշխատանքը կատարել Պատվիրատուի տրամադրած տեքստերով, իր ուժերով, նյութերով, սարքավորումներով և գործիքներով:

2.1.3. Տեղեկագրի 300 օրինակը, հրապարակման օրվանից առնվազն 30 աշխատանքային օրվա ընթացքում առաքել հասցեատերերին՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված ցուցակի:

2.1.4. Իր մեղքով առաջացած խոտանի դեպքում վճարել խոտանի վերացման կամ լրացուցիչ հրատարակման համար կատարված ծախսերը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Սույն պայմանագրով նախատեսված ծավալով և կարգով աջակցել Կապալառուին՝ աշխատանքները կատարելիս:

2.2.2. Տեղեկագրի տեքստերը Կապալառուին ներկայացնել հրապարակման՝ օրվանից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:

2.2.3. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ աշխատանքի արդյունքն վատթարացնող շեղումներ կամ

աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

2.2.4. Պատշաճ կարգով կատարել սույն Պայմանագրով նախատեսված վճարումները:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1 Ցանկացած ժամանակ սույն պայմանագրի շրջանակներում ստուգել Կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.3.2. Միակողմանի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն իր մեղքով խախտում է պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

3. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

3.1. Տեղեկագիրը հրատարակված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. Աշխատանքի գինը և վարձատրությունը

4.1. Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 10.304.448 (տաս միլիոն երեք հարյուր չորս հազար չորս հարյուր քառասունութ) դրամ (ներառյալ բոլոր հարկերը). 1 մամուլի միջին գինը կազմում է 140 դրամ, որը որոշված է կողմերի համաձայնությամբ և ներառում է ընկերության միջոցներով կատարված նախատպագրական (թղթե կրիչների վրա տրամադրված միջազգային պայմանագրերի էլեկտրոնային տարբերակների կազմումը, պայմանագրերի բնօրինակների հաստատված պատճենների համադրումը դրանց էլեկտրոնային տարբերակների հետ, տրամադրված տեքստերի հայերեն և օտարալեզու տեքստերի համադրումը և պայմանագրերի հայերեն և օտարալեզու տեքստերի սրբագրումը, համակարգչային մակետի կազմում, շուտիպի պատրաստում) և այլ աշխատանքների գինը և առաքման ծախսերը՝ հաշվի առնելով, որ պայմանագրերի հրապարակման ներկայացված տարեկան միջին ծավալը չի գերազանցելու մեկ համարի համար 122,672 տպագրական մամուլը:

4.2. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված գումարը Կապալառուին վճարել կանխավճարային կարգով Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած համամասնությամբ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերից մեկի կողմից պայմանագիրը լրիվ կամ մասնակի չկատարելու դեպքում մեղավոր կողմը պարտավոր է հատուցել դրա հետևանքով մյուս կողմին պատճառված վնասները:

6. Վեճերի լուծման կարգը

Պատվիրատուի և Կապալառուի միջև սույն պայմանագրի կատարման ընթացքում առաջացած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունը և լուծումը

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում գնման ընթացակարգը և Պայմանագիրը գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու հանգամանքը հավաստող լիազոր մարմնի դրական եզրակացության տրման պահից:

7.2. Սույն պայմանագրում փոփոխությունները ու լրացումները կատարվում են երկկողմ համաձայնությամբ՝ այդ մասին կազմելով արձանագրություն, որը ստորագրում են Կապալառուն ու Պատվիրատուն կամ նրանց լիազոր ներկայացուցիչները:

7.3. Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 7 օր առաջ հայտնելով մյուս կողմին՝ փոխհատուցելով դրա արդյունքում մյուս կողմին պատճառած և փաստաթղթերով հիմնավորված վնասը:

8. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական շենք թիվ 2
Հեռ. 54-40-41

Գ[illegible] [illegible]տնօրինողար՝
[illegible]ան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ

Տիգրան Մեծի 4
Հ/հ 163008[illegible]
Հայէ[illegible]
ՀՎ[illegible]02538276

Տնօրեն
Ա. [illegible]յան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «29» հունվարի 2009թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Ծ. Ավագյանի, որը գործում է ՀՀ ԱԳՆ կանոնադրության հիման վրա, մի կողմից և «պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «կապալառու», ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հավելվածը, ինչպես նաև այն, որ Կապալառուն «պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալի մասին» ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքած 2000թ. օգոստոսի 11-ի պայմանագրի համաձայն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հրապարակումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կապալառուի միջև 2007 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրի 2.1.1. կետում «300 օրինակ» բառերը փոխարինել «350 օրինակ» բառերով:

2. Պատվիրատուի և Կապալառուի միջև 2007 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրի և 4.1 կետում «10.304.448 (տաս միլիոն երեք հարյուր չորս հազար չորս հարյուր քառասունութ) դրամ» բառերը փոխարինել «15.304.170 (տասնհինգ միլիոն երեք հարյուր չորս հազար հարյուր յոթանասուն) դրամ» բառերով, իսկ «տարեկան 122,672 տպագրական մամուլ» բառերը՝ «տարեկան 156, 165 տպագրական մամուլ» բառերով:

3. Պատվիրատուի և Կապալառուի միջև 2007 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.4. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.3.2. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Կապալառուի իրականացրած աշխատանքները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա

համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքների կատարման համար Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Կապալառուի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:»

4. Եզրափակիչ դրույթներ

Սույն Արձանագրությունը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից և հանդիսանում է պատվիրատուի և Կապալառուի միջև 2007 թվականի հունիսի 29-ին կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ
Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական շենք թիվ 2 հեռ. 54-40-41	Տիգրան Մեծի 4 [illegible]
Գլխավոր բ[illegible] Շ. Ավ[illegible]	Տնօրեն [illegible]

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԼՐԱՑՈՒՑԻՉ

ք. Երևան «25» հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գլխավոր քարտուղար Շ. Ավագյանի, որը գործում է ՀՀ ԱԳՆ կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ հաշվի առնելով «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածը, ըստ որի «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիրը» հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղակագրի» հավելվածը, ինչպես նաև այն, որ Կապալառուն «Պետական կարիքների համար աշխատանքների կատարման կապալի մասին» ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքած 2000թ. օգոստոսի 11-ի պայմանագրի համաձայն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղակագրի» հրատարակումը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. 2007թ. հունիսի 29-ին կնքված պայմանագրի 2.1.1 և 4.1 կետերը շարադրել.

2.1.1. Պատվիրատուի հանձնարարությամբ հրատարակել Տեղեկագիրը՝ 500 օրինակ տպաքանակով:

4.1 Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 11.774.000 (տասնմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունչորս հազար) դրամ (ներառյալ բոլոր հարկերը), մեկ մամուլի միջին գինը՝ 140 դրամ, որը որոշված է կողմերի համաձայնությամբ և ներառում է ընկերության միջոցներով կատարված նախատպագրական (թղթե կրիչների վրա տրամադրված միջազգային պայմանագրերի էլեկտրոնային տարբերակների կազմումը, պայմանագրերի բնօրինակների հաստատված պատճենների համադրումը դրանց էլեկտրոնային տարբերակների հետ, տրամադրված տեքստերի հայերեն և օտարալեզու տեքստերի համադրումը և պայմանագրերի հայերեն և օտարալեզու տեքստերի սրբագրումը, համակարգչային մակետի կազմում, շուռտիպի պատրաստում) և այլ աշխատանքների գինը և առաքման ծախսերը՝ հաշվի առնելով, որ պայմանագրերի հրապարակման ներկայացված ծավալը չի գերազանցելու մեկ համարի համար տարեկան 84,1 տպագրական մամուլը:

2. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, 2 օրինակից և հանդիսանում է 29.06.2007թ. կնքված պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Երևան, Հանրապետության Հրապարակ
Կառավարական շենք թիվ 2
Հեռ. 54-40-41

Գլխավոր քարտուղար
Շ. Ավագյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ

Տիգրան Մեծի 4
Հ/հ 163008203131
Հայէկոնոմբանկ
ՀՎՀՀ 02538276

Տնօրեն
Ս. Գրիգորյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Թ. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ

(ստորագրություն)

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ

Հրատարակման անվանումը	Քանակը (հատ)	Տարեկան տպագրման ենթակա համարների քանակը (հատ)	Մեկ համարի տարեկան միջին ծավալը (մամուլ)	Տարեկան ընդհանուր ծավալը (մամուլ)	Մեկ մամուլի միջին գինը (դրամ)	Գումարը (դրամ)
1. «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշ-տոնական տեղեկագիր» պարբերական (500 օրինակ տպաքանակի տպագրության դեպքում)	500	2	84,1	84100	140	11.774.000
Ընդամենը						11.774.000